ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ՑԱՎԱԿՑԱԿԱՆ ԳԻՐ Է ՀՂԵԼ ՄՈՍԿՎԱՅԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ՌՈՒՍԻՈ ՊԱՏՐԻԱՐՔԻՆ

Ռուսաստանի Դաշնությունում վերջին օրերին տեղի ունեցած ողբերգական դեպքերի առիթով սույն թվականի մարտի 22-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը ցավակցական գիր է հղել Մոսկվայի և Համայն Ռուսիո Նորին Սրբություն Ալեքսի Բ Պատրիարքին:

Ցավակցագրի մեջ մասնավորապես ասվում է. «*Այս ծանր պահին Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու Գերագույն Հոգևոր Խորհրդի, եկեղեցականաց դասի և հավատավոր հոտի անունից Մեր անկեղծ ցավակցությունն ենք հայտնում Ձերդ Սրբությանը, հանգուցյալների հարազատներին ու մտերիմներին և Ռուսաստանի համայն ժողովրդին:*

Աղոթք ենք բարձրացնում տուժածների շուտափույթ ապաքինման համար: Հայցում ենք Ամենողորմ Տիրոջը, որ երկնային Իր հարկերում հանգստության մեջ ընդունի զոհվածների հոգիները և Սուրբ Հոգով մխիթարի բոլոր սգավորներին»:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ